

## Նհինո Բուրջանաձեն դատի է տվել լրատվամիջոցներին

Հունիս 7, 2011

Նհինո Բուրջանաձեն դատի է տվել լրատվամիջոցներին

 [burjanadze\\_0.jpg](#) [1]

Ընդդիմադիր առաջնորդ Նհինո Բուրջանաձեն դատի է տվել «Ռուսթավի 2» և «Իմեդի» հեռուստաալիքներին, ինչպես նաև «Տաբուլա» ամսագրին: Նրա բողոքի հայտարարությունն ուղարկվել է նաև միջազգային լրագրողական կազմակերպություններին:

Քաղաքական գործչին բարկացրել է «Ռուսթավի 2» և «Իմեդի» հեռուստաընկերությունների տարածած տեղեկությունը մայիսի 26-ի ցույցի ցրման ժամանակ սպանված ոստիկանի մասին: Ըստ հայտարարության՝ ոստիկանն ընկել է Նհինո Բուրջանաձեին ուղեկցող մեքենայի տակ:

«Հեռուստաընկերությունները սուտ պատմություններ են տարածում և մեղադրում են ինձ հանցագործության մեջ: «Տաբուլա» ամսագիրն էլ տպագրել է իմ լուսանկարը շապիկի վրա և վերնագրել՝ «Դատե՛լ»:

Համաձայն ընդդիմադիր կայքում տեղադրված հաղորդագրության՝ Բուրջանաձեն պահանջում է փոխհատուցում իր կրած բարոյական և նյութական վնասների համար:

**Աղբյուր:** [Media.ge](#) [2]

### Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում LՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[LՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

**Source URL:** <http://www.jnews.am/node/1274>

### Links:

[1] [http://www.jnews.am/files/burjanadze\\_0.jpg](http://www.jnews.am/files/burjanadze_0.jpg)

[2] <http://www.media.ge/en/node/41333>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>